

Արամ Այվազյան

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի
դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ am.ayvazyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2023.1-8

ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԹՈՂՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴԻԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՆՈՐՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածում ներկայացվել են վտանգի մեջ թողնելու՝ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված հանցակազմի նախատեսման սոցիալական և բարոյական հիմքերն ու անհրաժեշտությունը և այդ առիթով ներկայացվել տարբեր քրեագետների մեկնաբանությունները: Բարձրաձայնվել է ՀՀ քրեական օրենսգրքում վտանգի մեջ թողնելու հանցակազմի օրենսդրական ձևակերպման հիմնախնդիրը և առկա հակասությունը նույն օրենսգրքի այլ դրույթի հետ համադրության շրջանակներում միաժամանակ տալով անհրաժեշտ մի շարք առաջարկություններ:

Հիմնաբառեր. վտանգի մեջ թողնել, անհետաձգելի օգնություն, քրեական պատասխանատվություն, ինքնապահպանության միջոցներ, օգնություն ցույց տալ, հոգ տանել, իրական հնարավորություն:

Ներածություն

Մարդու կյանքը, որպես գերագույն արժեք, պահանջում է համապատասխան իրավական պաշտպանություն: ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև ՀՀ քր. օր.), պաշտպանելով առավել կարևոր հասարակական հարաբերությունները, առաջ է քաշել անհատի շահերի պաշտպանությունը: Պա-

տահական չէ, որ օրենսդիրը ՀՀ նոր քրեական օրենսգրքի հատուկ մասի առանձին գլուխների տեսքով է նախատեսել կյանքի դեմ ուղղված հանցագործությունները, առողջության դեմ ուղղված հանցագործությունները և առանձին գլխով նաև կյանքն ու առողջությունը վտանգող հանցագործությունները: Այդ արժեքներին վնաս հասցնելու հետ միասին լուրջ վտանգ են ներկայացնում այն արարքները, որոնք խախտում են մարդու կյանքի և առողջության անվտանգությունը, մասնավորապես՝ մարդկանց առանց օգնության կամ, այլ կերպ ասած, վտանգի մեջ թողնելը, եթե նրանք գտնվում են կյանքին կամ առողջությանը սպառնացող դրության մեջ: Չնայած նրան, որ այդպիսի անգործության դեպքում կարող է կյանքին և առողջությանն իրական վնաս չհասցվել, սակայն դրանով խախտվում են առանձին խմբերի անձանց անվտանգ գոյատևման փոխհարաբերությունները, և այդ արարքը համարվում է ոչ միայն բարոյագուրկ, այլև առանձին դեպքերում հակաիրավական ու այն էլ՝ հանցավոր:

Սույն հոդվածի շրջանակներում կվերլուծվի վտանգի մեջ թողնելու հանցակազմի և ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի կոնկրետ իրավակարգավորումներում առկա հակասությունները՝ տալով այդ կապակցությամբ առաջարկություններ:

Մեթոդ

Ընտազոտության մշակման ընթացքում կիրառվել է հասարակական գործընթացների և իրավական երևույթների ձանաչողության տեսության մեխանիզմ համարվող ժամանակակից այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ ձանաչողության համագիտական մեթոդները՝ վերլուծությունը, համադրումը, համակարգային մոտեցումը, ինդուկցիայի և դեդուկցիայի տրամաբանական հնարքները: Մասնավորապես՝ հետազոտության մեջ տեսական հիմնավորումները տրված են իրավահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդների հիման վրա, և հիմք են ընդունվել հայ և օտարերկրյա տարբեր մտածողների աշխատությունները, գաղափարները, իսկ որպես իրավական հիմք դիտարկվել են տարբեր պետությունների օրենսդրական կարգավորումները:

Արդյունքներ

Հայ հասարակության մեջ միշտ էլ գոյություն են ունեցել բարոյական նորմերը, որոնք համարվել են անգերազանցելի արժեք ցանկացած հասարակական-տնտեսական ֆորմացիայի դեպքում: Դրանցից մեկն է օգնություն ցուցաբերելը փորձանքի մեջ ընկած մերձավորին՝ գթասրտությունից ելնելով: Մահացողի նկատմամբ գթասրտությունը միշտ էլ եղել է հայ ազգային բնավորության առանձնահատուկ գիծը:

20-րդ դարի սկզբին ռուս իրավաբան Լ.Ե.Վլադիմիրովը գրել է. «Օրենսդրության մեջ բացակայում է այն կարևոր առարկան, որին պետք է ուշադրություն դարձվի և՛ բնածին մարդասիրությունից և՛ մեկ քաղաքացիական

հասարակության անդամների՝ միմյանց միջև գոյություն ունեցող փոխադարձ և մեր դարում արդեն ընդհանուր հասկացություններից ելնելով: Դրանց թվին է պատկանում մի պարտականություն, այն է՝ օգնել մերձավորին, ով հայտնվել է վտանգի մեջ, երբ այն մարդու գոյությանն է սպառնում և այդ օգնությունը ոչ միայն հնարավոր է, այլև չի պահանջում հատուկ միջոցների կիրառում, ոչ էլ հերոսական քաջություն ու անձնագոհություն: Այդ դեպքերում հենց անտարբերությունը հանցագործություն է և արժանի է պատժի» (Владимиров, 1903, էջ 244): Նա չի համաձայնվում օգնություն չցուցաբերելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հակառակորդների հետ, ովքեր գտնում են, որ այդպիսի համաքաղաքացիական պարտականությունը չունի իրավական հիմքեր: Լ.Ե.Վլադիմիրովը համարում էր, որ այն պետք է տարածվի բոլոր քաղաքացիների վրա բոլոր այն դեպքերում, որտեղ դա չի կարող անել ինքը՝ պետությունը: Այդ քաղաքացիական պարտականությունը օրենքի վրա հիմնելու ձգտումը չունի որոշիչ նշանակություն: Վտանգի մեջ գտնվող մերձավորին օգնությունը համարվում է ուղղակի մարդկանց նկատմամբ մարդկային վերաբերմունքի հետևանք, այդ պատճառով էլ պետությունն ունի խելամիտ հիմնավորում քաղաքացիների վրա այդպիսի պարտականություն դնելու համար (Новгородцев, 1896, էջ 2): Այդպիսի սահմանումը համապատասխանում է պատմականորեն ձևավորված ժողովրդի ոգուն, նրա բարոյական արժեքներին:

Կյանքը և առողջությունը վտանգի տակ դնող հանցագործությունները հասարակությանը կարող են հասցնել հսկայական, իսկ երբեմն՝ պարզապես անուղղելի վնաս: Մարդկային անհատականության նկատմամբ անհարգալից և արհամարհական վերաբերմունքը «իջեցնում է» հասարակությունը (Побегайло, 2001, էջ 35): Այդ հանգամանքն այն գործոններից մեկն է, որը պահանջում է անձի պահպանության ոլորտում իրականացնել գործող քրեական օրենսդրության կատարելագործում՝ նրանում կատարելով հիմնավորված փոփոխություններ և լրացումներ: Ներկա պահին այդ գործունեությունը պետք է դառնա հանցավորությանը հակազդելու պետական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

Այսօր անհատի, նրա իրավունքների անհետահայաց փառաբանումը, պարտականությունների մասին լռումը, երբեմն պետության կարգավորող գործունեության մշտական քննադատությունը և արևմտյան ինդիվիդուալիզմի գովերգումը բնութագրում են Հայաստանի սոցիալ-իրավական կյանքի հիմնական ուղղությունները: Ընդ որում, հաճախ բաց է թողնվում այն հանգամանքը, որ հասարակության նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ է, որ այդ անհատական աշխարհայացքը բխի սոցիալականից և չհակասի դրան:

Որոշ երկրների քրեական օրենսգրքեր ընդհանրապես չունեն վտանգի մեջ թողնելու վերաբերյալ նորմեր, օրինակ՝ Շվեդիայի քրեական օրենսգիրքը: Նրանում միայն 9-րդ հոդվածով է նախատեսված պատասխանատվություն վտանգի մեջ դնելու համար այն անձանց համար, ովքեր կոպիտ անգուշության հետևանքով հանգեցնում են մահացու վտանգի կամ ծանր մարմ-

նական վնասվածքի վտանգի կամ մեկ այլ անձի ծանր հիվանդությանը (Уголовный кодекс Швеции, 2001, էջ 39): Տվյալ դեպքում տեղ ունի անզգուշությանը վտանգի մեջ դնելը: Դիտավորյալ վտանգի մեջ թողնելը չի կլանվում այդ հոդվածով:

Ռոմանագերմանական իրավական համակարգի ուրիշ քրեական օրենսդրությունները քննարկվող հանցանքի սուբյեկտի դերում նախատեսում են միայն պարտավորված անձանց կողմից վտանգի մեջ թողնելը: Օրինակ՝ Նիդեռլանդների քրեական օրենսգրքը պարունակում է 15-րդ բաժինը՝ «Անձին օրհասական դրության մեջ թողնելը»: Նշված բաժնում ամկա են 6 հոդվածներ՝ 255-260: 255-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այն քաղաքացու համար, ով մեկ այլ անձի պահել է անօգնական վիճակի մեջ այն դեպքում, երբ պարտավոր էր նրա նկատմամբ հոգ տանել (Уголовный кодекс Голландии, 2000): ԳՖՀ-ի քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածում՝ «Վտանգի մեջ թողնելը», ամրապնդվում է միայն տուժողի նկատմամբ խնամք տանելու պարտականություն ունեցող սուբյեկտի պատասխանատվությունը (Уголовный кодекс ФРГ, 2000, էջ 131-132): Իսպանիայի քրեական օրենսգրքի 9-րդ բաժնում՝ «Օգնություն չցուցաբերելը», նախատեսված 195-րդ հոդվածը պատիժ է սահմանում լուրջ վտանգի մեջ գտնվող մարդուն օգնություն ցույց չտալու համար, եթե անձը հնարավորություն է ունեցել ցուցաբերել դա առանց իր կամ երրորդ անձանց համար վտանգի (Уголовный кодекс Испании, 2000):

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ վտանգի մեջ թողնելու համար նախատեսված հոդվածներին տարբեր երկրներում հատուկ է իրենց կառուցվածքը՝ նյութական, ձևական և խառը՝ կախված պետությունից, գործողության ժամանակից, մեղավորների և պահպանության ենթակա անձանց շրջանակից:

Համեմատելով ՀՀ գործող օրենսդրությունը վտանգի մեջ թողնելու մասին արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության հետ՝ կարելի է նշել, որ այն ավելի պրոգրեսիվ է, քան անգլո-սաքսոնական համակարգինը, բայց զիջում է ռոմանագերմանական իրավունքի համակարգի որոշ երկրների, որոնց առաջադեմ գաղափարները համապատասխանում են պետության յուրաքանչյուր քաղաքացու շահերին և նպաստում են հասարակությունում բարոյականության ամրապնդմանը: Այդ գաղափարների որոշ տարրեր, որոնք չեն հակասում հայկական իրավունքի բարոյական սկզբունքներին, մասնավորապես վտանգի մեջ դնելը, կարող էին օգտագործվել օրենսդրի կողմից վտանգի մեջ թողնելու մասին հոդվածները նախագծելիս: Մեր կարծիքով վտանգի մեջ թողնելու մասին հայկական օրենսդրության նորմերը ունեն կատարելագործման կարիք՝ հայկական քրեական քաղաքականության դոկտրինային համապատասխան՝ յուրաքանչյուր մարդու կյանքի և առողջության անվտանգությունն ապահովելու համար՝ հաշվի առնելով արտասահմանյան երկրների առաջադեմ փորձը:

Վտանգի մեջ թողնելու հանցակազմի օրենսդրական ձևակերպումը հայրենական օրենսդրության շրջանակներում ամրագրված է ՀՀ քրեական

օրենսգրքի 182-րդ հոդվածով, որի 1-ին մասով, մասնավորապես, քրեական պատասխանատվություն է սահմանվում կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալու համար, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել, կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելու համար, *եթե պարտավոր չի եղել հոգ փրանել նրա մասին և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր վիճակի մեջ:*

Օրենսդրական նման ձևակերպման առկայության պարագայում ստացվում է, որ եթե անձը դրսևորում է անգործություն, ապա ամեն դեպքում, անձը ենթակա է քրեական պատասխանատվության, ինչն ինքնին առաջացնում է քրեաիրավական կարգավորումներում հակասություն: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարք է համարվում պատժի սպառնալիքով արգելված գործողությունը կամ անգործությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անգործությամբ կատարված արարքը քրեական պատասխանատվություն է առաջացնում, *եթե անձի վրա իրավական ակտով դրված է եղել գործողություն կատարելու պարտականություն, կամ այդ պարտականությունը բխել է նրա սրանձնած պարտավորությունից կամ բխել է օրենքով պաշտպանվող շահերը վրանգի ենթարկած կամ դրանց վնաս պատճառած իր նախորդ վարքագծից:*

Մեր կողմից արձանագրված վերոհիշյալ օրենսդրական երկու ձևակերպումներում հայտնաբերված առերևույթ հակասությունն ընդգծելու նպատակով բերենք մի օրինակ. անձը փողոցի մայթով զբոսնելիս ականատես է լինում, թե ինչպես է մի ավտոմեքենա ենթարկվում վթարի, որի վարորդն ակնհայտորեն գտնվում է իր կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում և զրկված է ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից: Նման պարագայում անցորդի կողմից վարորդի կյանքի և առողջության պահպանության ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը, առկա վերոհիշյալ իրավակարգավորումների լույսի ներքո, կդիտարկվի որպես հանցանք՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասով:

Ստացվում է, որ վարորդին օգնություն ցուցաբերելը թեև անցորդի վրա դրված չէ որևէ իրավական ակտով որպես գործողություն կատարելու պարտականություն, այդ պարտականությունը չի բխել անցորդի ստանձնած որևէ պարտավորությունից, ինչպես նաև առկա չէ անցորդի կողմից օրենքով պաշտպանվող շահերը վտանգի ենթարկած կամ դրանց վնաս պատճառած նախորդ որևէ վարքագծից, սակայն, ըստ առկա իրավակարգավորման, անցորդը ենթակա է այդ վարորդին օգնություն չցուցաբերելու, այսինքն այդ անգործության, ասել է թե՛ վարորդին վտանգի մեջ թողնելու համար: Կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի իրավական պահանջի ուժով անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի

1-ին մասն ապաքրեականացնել: Այն, որ բերված օրինակում անցորդի կողմից ցուցաբերված պասիվությունը՝ անգործությունն ինքնին անբարոյական և պարսավելի արարք է՝ մանավանդ անցորդի կողմից օգնություն ցուցաբերելու ակնհայտ հնարավորություն ունենալու դեպքում, սակայն չնոռանանք, որ ոչ բոլոր հակաբարոյական վարքագծերն են միաժամանակ համարվում հանցավոր:

Թերևս, առաջ քաշված գաղափարի և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասն ապաքրեականացնելուն ուղղված տեսակետին հակադարձողները, որպես անձի կողմից գործողություն կատարելու պարտականություն կարող են դիտարկել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքին արդեն իսկ դա քրեականացնելով առաջացնում է անձի կողմից անգործություն թույլ չտալու և գործողություն կատարելու հիմք՝ որպես իրավական ակտով սահմանված պարտականություն, սակայն հայտնի փաստ է, որ ՀՀ քրեական օրենսգրքը կոչված է ապահովելու և երաշխավորելու այլ՝ ՀՀ քրեական օրենսգրքից դուրս սահմանված իրավակարգավորումներով ամրագրված իրավահարաբերությունները:

Քննարկում

Մարդու կյանքը և առողջությունը համամարդկային կարևորագույն արժեքներից են: Հասարակության յուրաքանչյուր անդամի կյանքի և առողջության անվտանգության ապահովումը համարվում է ոչ միայն պետության, այլ նաև հասարակության յուրաքանչյուր անդամի իրավական և բարոյական պարտականությունը: Այդպիսի դիրքորոշումը հիմնված է մարդկային կյանքի արժեքների վերաբերյալ գործող օրենսդրության, պրակտիկայի վերլուծության, ինչպես նաև փիլիսոփայական ուսումնասիրությունների վրա, որոնք կասկած չեն հարուցում անձի համակողմանի պաշտպանության անհրաժեշտության հարցում՝ որպես հասարակության բարձրագույն սոցիալական արժեքի:

Քրիստոնեական ուսմունքը, որը դրված է շատ երկրների բարոյական նորմերի հիմքում, հիմնված է հարազատի նկատմամբ սիրո վրա: Կրոնական աշխարհայացքից բխող հասարակական բարոյականությունը ցանկացած մարդու բարոյական պարտքն է համարում օգնություն ցույց տալ կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ գտնվող մարդուն: ՀՀ քրեական իրավունքը հիմնված է բարոյականության վրա: Այն բխում է բարոյականության նորմերից և իր ազդեցությամբ ամրապնդում է բարոյականությունը: Քրեական իրավունքի նորմերի պահպանումը առաջին հերթին հիմնված է ոչ թե պատժվելու վախի, այլ բարոյական արգելքի ներքին հանդուժման վրա: Քրեական իրավունքը և բարոյականությունը գտնվում են մշտական կապի մեջ՝ լրացնելով մեկը մյուսին: Հասարակության բարոյական զարգացման բարձր շրջանում քրեաիրավական նորմերը իրենց գերակա դիրքը գիջում են բարոյականին: Իրավական նորմերի պահպանությունը ապահովվում է բարոյական պարտքի գիտակցմամբ: Սոցիալական վերա-

փոխումների շրջանում, երբ տեղի է ունենում բարոյական հիմքերի արժեզրկում, բարոյական նորմերին պետք է լինում քրեաիրավական նորմերի աջակցությունը, այդ թվում՝ անհատական ազատության սահմանափակման հաշվին, եթե դա պահանջվում է սոցիալական բարձրագույն արժեքների պաշտպանության համար:

Անձի անգործությունը, ով մարդուն թողել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ, երբ կարելի էր օգնություն ցուցաբերել՝ առանց իր համար ավելորդ վտանգի, համարվում է ոչ միայն հակաբարոյական արարք, այլ նաև հանցավոր, ընդ որում՝ ոչ միայն անձի հանդեպ, ում նկատմամբ սուբյեկտը խնամքի պարտականություն ուներ, այլ նաև ցանկացած անձի, ով գտնվել է նման իրավիճակում: Փիլիսոփայության, կրոնի, բարոյականության և իրավունքի տեսակետից քրեական պատասխանատվությունը վտանգի մեջ թողնելու համար համարվում է սոցիալապես և գիտականորեն հիմնավորված:

Վտանգի մեջ թողնելը համարվում է դիտավորյալ հանցագործություն, որտեղ ուղղակի դիտավորությունը արտահայտվում է հենց արարքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով /թողնելով, օգնություն ցույց չտալով կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելով/ և չի տարածվում հետևանքների վրա: Հետևանքների նկատմամբ վերաբերմունքը կարող է լինել անզգույշ: Ակնհայտությունը ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի մեջ վերաբերվում է գիտակցմանը սուբյեկտի կողմից, որ նա առանց օգնության է թողնում անձին, ով գտնվում է կյանքի կամ առողջության համար վտանգավոր դրության մեջ և զրկված է ինքնապահպանության համար միջոցներ ձեռք առնելու հնարավորությունից: Տվյալ հասկացությունը բնութագրում է կատարված արարքի՝ ցուցաբերված անգործության մասով անձի ունեցած գիտակցական մակարդակը, բայց չի որոշում հանցակազմի սուբյեկտիվ կողմն ամբողջությամբ և չի կարող կապված լինել դիտավորությամբ ասենք առողջությանը վնաս պատճառելու հետ:

Եզրակացություն

Կատարված հետազոտությունների և այդ ամենից բխող եզրահանգումների արդյունքում առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի օրենսդրական ձևակերպման մեջ կատարել փոփոխություն և լրացումներ առեղծված ստորև բերված դրույթները՝

- ապաքրեականացնել ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ «Կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող և ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անհրաժեշտ և ակնհայտ անհետաձգելի օգնություն ցույց չտալը, եթե հանցավորն այդ անձին օգնություն ցույց տալու իրական հնարավորություն է ունեցել, կամ օգնություն ցույց տալու անհրաժեշտության մասին համապատասխան մարմիններին չհաղորդելը, եթե պարտավոր չի եղել հոգ տանել նրա մասին

- և ինքը նրան չի դրել կյանքի համար վտանգավոր վիճակի մեջ»:
- ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսել առանձնապես ծանրացուցիչ հանգամանք՝ հանցակազմը դարձնելով նյութական, այն է՝ «Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մահ կամ այլ ծանր հետևանքներ»:
 - Միաժամանակ 5-րդ մասով սահմանել՝ «Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է երկու կամ ավելի անձանց մահ»:

Օգտագործված գրականության ցանկ

Թումայան, Դ., Հովհաննիսյան, Կ. (2022). *Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հարուկ մաս: Ոստիկանական ձեռնարկ: ՀՀ ոստիկանության կրթահամալիր*.- Եր.: Լիմուշ:

ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118

ՀՀ քրեական օրենսգրք, ՀՕ-199-Ն, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30
Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.07.2022

Владимиров, Л. Е. (1903). *Уголовный закон как воспитатель народа*. М.

Новгородцев, И. (1896). *Историческая школа юристов, ее происхождение и судьба*. М.

Побегайло, Э. (2001). Проблемы уголовной политики в сфере обеспечения безопасности жизни граждан (законотворческий аспект) // *Уголовное право*. № 1, էջեր 42-55:

Уголовный кодекс Швеции (2001). СПб.

Уголовный кодекс Голландии (2000). СПб.

Уголовный кодекс ФРГ (2000). М.

Уголовный кодекс Испании (2000). М.

References

Tumasyan, D., Hovhannisyanyan, K. (2022). *Hayastani Hanrapetutyanyan kreakan iravunk: Hatuk mas: Usumnakan dzedzrrnark* [Criminal law of the Republic of Armenia. Special part. Educational manual]: HH vostikanutyanyan krtahamalir.- Yer.. Limush.

HH Sahmanadrutyun [RA Constitution], HHPT 2015.12.21/Hatuk tvogharkum Hod. 1118

HH kreakan orensirk [RA Criminal Code], HO-199-N, Miasnakan kayk 2021.05.17-2021.05.30
Pashtonakan hrparakman ory 27.05.2021, uzhi mej mtnelu amsat'ivy, 01.07.2022

Vladimirov, L. Ye. (1903). *Ugolovnyy zakon kak vospitatel' naroda* [Criminal law as an educator of the people]. М.

Novgorodtsev, I. (1896). *Istoricheskaya shkola yuristov, yeye proiskhozheniye i sud'ba* [The historical school of lawyers, its origin and fate]. М.

Pobegaylo, E. (2001). Problemy ugolovnoy politiki v sfere obespecheniya bezopasnosti zhizni grazhdan (zakonotvorcheskiy aspekt) [Problems of criminal policy in the field of ensuring the safety of life of citizens (legislative aspect)] // *Ugolovnoye pravo*. № 1, ejer 42-55:

Ugolovnyy kodeks Shvetsii [Swedish Penal Code] (2001). SPb.
Ugolovnyy kodeks Gollandii [Dutch Penal Code] (2000). SPb.
Ugolovnyy kodeks FRG [Criminal Code of Germany] (2000). М.
Ugolovnyy kodeks Ispanii [Spanish Criminal Code] (2000). М.

Арам Айвазян

*Преподаватель кафедры юриспруденции Международного университета
Евразия, кандидат юридических наук, доцент
Эл. адрес: aram.ayvazyan@eiu.am*

ПРОБЛЕМА ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ФОРМУЛИРОВКИ СОСТАВА ОСТАВЛЕНИЯ В ОПАСНОСТИ И ДЕЙСТВУЮЩЕЕ ПРОТИВОРЕЧИЕ В КОНТЕКСТЕ АНАЛИЗА ДРУГИХ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ

В статье представлены социальные и нравственные основания и необходимость криминализации оставления в опасности и представлены комментарии различных ученых по этому поводу. Поднята проблема правовой формулировки состава преступления оставления в опасности в УК РА и существующего противоречия с другими нормами Уголовного кодекса, при этом дан ряд необходимых рекомендаций. Имеющаяся в специальной части уголовного законодательства РА формулировка относительно рассматриваемого состава преступления противопоставляется одной из закрепленных и провозглашенных в общей части этого законодательства универсальных правовых регулирований, на представление которой и решение непроизвольно возникшей проблемы направлена данная работа. В частности, из имеющейся формулировки следует, что если лицо проявляет бездействие, то в любом случае лицо подлежит уголовной ответственности, что само по себе вызывает противоречие в уголовно-правовых регулированиях. Согласно Уголовному кодексу РА, деяние, совершенное в форме бездействия, влечет уголовную ответственность, если правовым актом на лицо была возложена обязанность совершить действие или эта обязанность вытекала из принятого им обязательства, или следовала из его предыдущего поведения, подвергнувшего опасности охраняемые законом интересы или причинившего кому-либо вред.

Ключевые слова: Оставление в опасности, неотложная помощь, уголовная ответственность, меры самосохранения, оказание помощи, забота, реальная возможность.

Aram Ayvazyan*Lecturer of the Law at the Eurasia International University,**Ph.D. in Law, Associate Professor**Email: aram.ayvazyan@eiu.am*

THE PROBLEM OF LEGISLATIVE FORMULATION OF THE CORPUS DELICTI OF ABANDONMENT IN DANGER AND THE EXISTING CONTRADICTION IN THE CONTEXT OF ANALYSIS OF OTHER LEGAL NORMS

The article is devoted to social and moral grounds and necessity of legislative enshrinement of the corpus delicti of abandonment in danger cited by the Criminal Code of the RA, and comments of various criminologists on this issue. The problem of legislative formulation of the corpus delicti of abandonment in danger in the RA Criminal Code and the existing contradiction in the context of combination with other provisions of the Criminal Code have been raised, and a number of necessary recommendations has been proposed. The wording available in the special part of the criminal legislation of the RA regarding the mentioned corpus delicti contradicts one of the universal legal regulations fixed and declared by the general part of that legislation, and this article aims to raise and solve the problem that has unintentionally arisen. In particular, according to the existing definition, if a person shows inactivity, then, in any case, the person is subject to criminal liability, which in itself causes a contradiction with other criminal law regulations. Meanwhile, according to the Criminal Code of the RA, an act committed through inaction causes criminal liability if a person has a duty to perform an action by a legal act, or this duty derives from his/her assumed obligation, or derives from his/her previous behavior that endangered the interests protected by the law or caused damage to someone.

Key words: abandonment in danger, urgent help, criminal liability, measures for self-protection, offer help, to take care of, real possibility.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. ապրիլի 10-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. ապրիլի 12-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. մայիսի 10-ին: